

ՁՈՆ ԼԵՈՆՆԻԴ ԱԶԳԱԼԴՅԱՆԻՆ

Posted on December 30, 2017 by Keghart



Category: [Opinions](#)



Սարգիս Հացպանեան, [Facebook](#), Ֆրանսիա, 23 նոյեմբեր 2017 թ.

Երևի ոմանք գիտեն, որ Փարիզից 1990 թ. գարնանը, ձեռքումս միայն «Մեկ ուղղությամբ տոմսով – One way ticket» և մշտական բնակության նպատակով ժամանել եմ Երևան: Ուզում եմ բոլորն էլ իմանան, որ իմ Ձեր հետ միասին 27 տարիներ ի վեր մշտապես ապրելը պարտական եմ ազգիս ամենախիսկական բոլոր դրական հատկանիշերով օժտված ՄԵԾ հայորդուն՝ Լեոնիդ Ազգալոյանին:



Ինդրում եմ իմ այս արտահայտությունից ոչ ոք թող չնեղանա, բայց ըստ իս, նա մեր պատմության 20-րդ դարի ավարտին «Օգտակար Գործողության Գործակցով» անչափելի մեծ առաքելություն կատարած ու իր մարտական ընկերոջ՝ «Ազատագրական Բանակի Արցախի Ճակատի» հրամանատար Վլադիմիր Բալայանի թաղման ժամանակ նրան բնութագրելու համար արտահայտածով «հարյուր տարին մեկ» ծնվող տեսակից էր: Մինչև իր՝ 1992 թ. հունիսի 21-ին անմահանալը նրա հետ անընդմեջ ացկացրածս մոտ 2 տարով եմ ապրում մինչ այսօր ու երդվել եմ ապրել նաև մինչև ինձ բաժին հասած երկրային կյանքի ամենավերջին շունջը:

Սարգիս Հացպանեան, [Facebook](#), Ֆրանսիա, 23 նոյեմբեր 2017 թ.

Երևի ոմանք գիտեն, որ Փարիզից 1990 թ. գարնանը, ձեռքումս միայն «Մեկ ուղղությամբ տոմսով – One way ticket» և մշտական բնակության նպատակով ժամանել եմ Երևան: Ուզում եմ բոլորն էլ իմանան, որ իմ Ձեր հետ միասին 27 տարիներ ի վեր մշտապես ապրելը պարտական եմ ազգիս ամենախիսկական բոլոր դրական հատկանիշերով օժտված ՄԵԾ հայորդուն՝ Լեոնիդ Ազգալոյանին:



Ինդրում եմ իմ այս արտահայտությունից ոչ ոք թող չնեղանա, բայց ըստ իս, նա մեր պատմության 20-րդ դարի ավարտին «Օգտակար Գործողության Գործակցով» անչափելի մեծ առաքելություն կատարած ու իր մարտական ընկերոջ՝ «Ազատագրական Բանակի Արցախի Ճակատի» հրամանատար Վլադիմիր Բալայանի թաղման ժամանակ նրան բնութագրելու համար արտահայտածով «հարյուր տարին մեկ» ծնվող տեսակից էր: Մինչև իր՝ 1992 թ. հունիսի 21-ին անմահանալը նրա հետ անընդմեջ ացկացրածս մոտ 2 տարով եմ ապրում մինչ այսօր ու երդվել եմ ապրել նաև մինչև ինձ բաժին հասած երկրային կյանքի ամենավերջին շունջը:

Այսօր պետք է լինելի իմ պաշտելի հայրենիքի ոստան Երևան քաղաքում, մասնակցելու և Ձեզ բեմից ողջունելու Արամ Խաչատրյանի անվան օպերայի հիասքանչ դահլիճում նշվող ազգիս ՄԵԾՆ ՉՈՐԱՎԱՐ Լեոնիդ Ազգալոյանի ծննդյան 75-ամյակի տոնախմբության միջոցառմանն անձնապես, որը ցավոք ստիպված եմ իմ արդեն չորս ամիսներ է չարանենզ քաղցկեղի դեմ բուժման նպատակով գտնվածս Ֆրանսիայի հիվանդանոցից միայն գրավոր ներկայացնել:

Այսիվ ազգիս ամենաբարոյական կերպարը ներկայացնող Լեոնիդ Ազգալոյանի մասին միայն մեկ բան պետք է ասեմ. Լեոնիդ Ազգալոյանը մերօրյա Գարեգին Նժդեհն է անտարակույս և նրա ազնիվ ու պարկեշտ կերպարը մեզ՝ բոլորիս օդ ու ջրի պես հարկավոր է մեր հայրենիքը կարծեք թշնամու և ման խժռող այս ապագային իշխանութուններից օր առաջ ազատվելու համար:

Ուստի փորձենք սովորել մեծ զորավարից, փորձենք լեոնիդյան փառքերով ապրել ազգովին... և կտեսնենք թե ամեն ինչ ինչպես դեպի լավն է ընթանալու: Հավատանք մեր ուժերին և ազգային ներուժին, քանզի Լեոնիդ ծնած հայ ազգը ընդունակ է իր առաջ կանգնած բոլոր հարցերն ի նպաստ իր ազգի լուծել:

Լավ եղեք սիրելի հայրենակիցներ, բարին ընդ Ձեզ, մեզ՝ բոլորիս:

Հայրենի սիրով և կարոտով...

«Սա Հայաստան է և վերջ»

